ԳԵՈՐԳԻ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ԴԻՄԻՏՐՈՎ

# ԳԵՈՐԳԻ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ԴԻՄԻՏՐՈՎ

Հուլիսի 2-ին, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց Բուլղարիայի Ժողովրդական Ռեսպուբլիկայի Մինիստրների Խորհրդի Նախագահ, Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի Գլխավոր Քարտուղար, միջազգային բանվորական շարժման ակնավոր գործիչ, բուլղարական ժողովրդի առաջնորդ, Սովետական Միության հավատարիմ բարեկամ Գեորգի Միխայլովիչ Դիմիտրովը։

Գեորգի Միխայլովիչ Դիմիտրովը ծնվել է 1882 թվի հունիսի 18-ին Ռադոմիր քաղաքում, պրոլետարական ռևոլուցիոն ընտանիքում։ Դեռևս 15 տարեկան պատանի Գ. Մ. Դիմիտրովը, տպարանում աշխատելով որպես գրաշար, մտնում է ռևոլուցիոն շարժման մեջ և ակտիվ մասնակցություն է ունենում բուլղարական տպագրիչների հնագույն պրոֆմիության գործունեությանը։

1902 թվից Գ. Մ. Դիմիտրովը բուլղարական բանվորական սոցիալ-դեմոկրատական պարտիայի անդամ է։ Նա Դմիտրի Բլագոևի գլխավորած «տեսնյակների» ռևոլուցիոն-մարքսիստական թևի կողմում ակտիվ պայքար է մղում ռևիզիոնիզմի դեմ։

Գ. Մ. Դիմիտրովը ռևոլուցիոն անձնվեր պայքարի շնորհիվ վաստակեց Բուլղարիայի ռևոլուցիոն բանվորների ջերմ սերը, որոնք նրան 1905 թվին ընտրեցին Բուլղարիայի Ռևոլուցիոն Պրոֆմիավորումների Միության քարտուղար։ Նա այդ պոստում անփոփոխ մնում է ընդհուպ մինչև 1923 թիվը, երբ ֆաշիստները ցրեցին այդ միավորումը։

Գլխավորելով բուլղարական պրոլետարիատի պայքարը, Գ. Մ. Դիմիտրովը անվեհերություն և աննկունություն է ցուցաբերում ռևոլուցիոն մարտերում, բազմիցս ենթարկվում է ձերբակալությունների ու հալածանքների։ Բուլղարիայում 1923 թվի սեպտեմբերյան զինված ապստամբության մեջ, Գ. Մ. Դիմիտրովը գլխավորում է Ռևոլուցիոն Գլխավոր Կոմիտեն, ցուցաբերում է ռևոլուցիոն անվեհերության, անհողդողդ կայունության և բանվոր դասակարգի գործին հավատարմության օրինակ։ Զինված ապստամբությունը ղեկավարելու համար ֆաշիստական դատարանը 1923 թվին ի բացակայության մահվան է դատապարտում Գ. Մ. Դիմիտրովին։ 1926 թվին կոմպարտիայի ղեկավարության դեմ ֆաշիստների կազմակերպած պրովոկացիոն դատավարությունից հետո Գ. Մ. Դիմիտրովը նորից ի բացակայության դատապարտվում է մահվան։

1923 թվին հարկադրված լինելով Բուլղարիայից անցնելու արտասահման, Գ. Մ. Դիմիտրովը վարում է պրոֆեսիոնալ ռևոլուցիոների կյանք։ Նա ակտիվորեն աշխատում է Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեում։

1933 թվին Գ. Մ. Դիմիտրովը ռևոլուցիոն գործունեության համար ձերբակալվում է Բեռլինում։ Լայպցիգի դատավարության օրերին Գեորգի

Դիմիտրովը դարձավ ֆաշիզմի և իմպերիալիստական պատերազմի դեմ մղված պայքարի դրոշակակիր։ Նրա հերոսական վարքագիծը դատարանում, ցասկոտ խոսքերը, որ նա նետում էր ֆաշիստների երեսին, մերկացնելով ոայխստագի հրկիզման կապակցությամբ նրանց նողկալի պրովոկացիան, պոկեցին ֆաշիստական պրովոկատորների դիմակը և ֆաշիզմի դեմ պայքարելու համար ամբողջ աշխարհում ոտքի հանեցին նորանոր միլիոնավոր աշխատավորների։

1935 թվին Դեորգի Դիմիտրովն ընտրվում է Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործկոմի Գլխավոր Քարտուղար։ Նա համառ պայքար է մղում միասնական պրոլետարական և ժողովրդական ճակատ ստեղծելու և ամրապնդելու համար՝ ֆաշիզմին հակահարված տալու նպատակով, պատերազմի դեմ, որ պատրաստում էին Գերմանիայի, Ճապոնիայի ու Իտալիայի ֆաշիստական պարագլուխները։ Նա բոլոր երկրների աշխատավորական մասսաներին անդուլ կերպով կոչ էր անում համախմբվել կոմունիստական պարտիաների շուրջը՝ ֆաշիստական ագրեսորների առաջ ճանապարհը փակելու համար։

Դ. Մ. Դիմիտրովը միջազգային կոմունիստական շարժման շարքերում մեծ աշխատանք կատարեց Մարքսիզմ-Լենինիզմի մեծ ուսմունքին, պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներին, իրենց երկրների ժողովրդական մասսաների շահերի պաշտպանության գործին հավատարիմ կոմպարտիաների ղեկավար կադրեր կոփելու գծով։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Դ. Մ. Դիմիտրովը կոմունիստներին կոչ էր անում գլխավորել ազգային ազատագրական-հակաֆաշիստական շարժումը և անդուլ աշխատանք էր կատարում հայրենասիրական բոլոր ուժերը կազմակերպելու ուղղությամբ՝ ֆաշիստական դավաճիչներին ջախջախելու համար։ Նա ղեկավարում էր Բուլղարական բանվորական (կոմունիստների) պարտիայի և բուլղարական բոլոր հայրենասերների պայքարը, որոնք զենքը ձեռքին ոտքի էին կանգնել գերմանա-ֆաշիստական օկուպանտների դեմ։

Ֆաշիզմի դեմ մղված պայքարում իր մատուցած աչքի ընկնող ծառայությունների՝ համար Դ. Մ. Դիմիտրովը 1945 թվին ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության կողմից պարգևատրվեց Լենինի շքանշանով։

Ֆաշիստական Գերմանիայի ջախջախումից հետո Դ. Մ. Դիմիտրովը ղեկավարում է Բուլղարիայի նոր ժողովրդա-դեմոկրատական ռեսպուբլիկայի շինարարությունը, դնում է բուլղարական ժողովրդի և Սովետական Միության ժողովուրդների հավիտենական բարեկամության հիմքերը։

Անդուլ կերպով աշխատելով հակաիմպերիալիստական միասնական լագերն ամրապնդելու և դեմոկրատական բոլոր ուժերը համախմբելու համար, Դ. Մ. Դիմիտրովը անողոք կերպով մերկացնում էր Տիտոյի նացիոնալիստական կլիկի դավաճանությունը սոցիալիզմի և միասնական հակաիմպերիալիստական ճակատի գործին։

Հանձին Դ. Մ. Դիմիտրովի, ամբողջ աշխարհի աշխատավորները կորցրին բոցաշունչ մարտիկի, որն իր ամբողջ հերոսական կյանքը նվիրել էր բանվոր դասակարգի գործին, կոմունիզմի գործին անձնուրացորեն ծառայելուն։

Դ. Մ. Դիմիտրովի մահը ծանր կորուստ է ամբողջ միջազգային բան-

վորական և կոմունիստական շարժման համար, կայուն խաղաղության և ժողովրդական դեմոկրատիայի բոլոր մարտիկների համար։ Բանվորական շարժման շարքերում իր անձնուրաց պայքարով, Լենինի-Ստալինի մեծ ուսմունքին իր անսահման հավատարմությամբ Դ. Մ. Դիմիտրովը վաստակեց ամբողջ աշխարհի աշխատավորության ջերմ սերը։

Գեորգի Միխայլովիչ Դիմիտրովի՝ Լենինի և Ստալինի հավատարիմ զինակցի, աննկուն ռևոլուցիոնների և հակաֆաշիստական տրիբունի կյանքը ոգեշնչող օրինակ կծառայի հանուն խաղաղության ու դեմոկրատիայի գործի, հանուն կոմունիզմի բոլոր մարտնչողների։

Դնաս բարով, մեր թանկագին բարեկամ և մարտական ընկեր։

Ա. Անդրեև
Է. Ռերիա
Ն. Բուլգանին
Կ. Վորոշիլով
Է. Կագանովիչ
Ա. Կոսիգին
Գ. Մալենկով
Ա. Միկոյան
Վ. Մոլոտով
Պ. Պոնոմարենկո
Դ. Պոսլով
Պ. Պոսպելով
Ի. Ստալին
Մ. Սուսլով
Ն. Խրուշչով
Ն. Շվերնիկ
Մ. Շկիրյատով